



ՎԱՐԴԱՆԱՆՑ

Ծրագիր

**Գրանցում «Վարդանանց»-ում որպես
տեղամասային պոլիկլինիկա**



Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1

Հեռ.՝ 060 59 21 00

Կայք՝ vcim.am

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ է առջարկվում ծրագրի շրջանակներում	Գրանցում «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնում, որպես տեղամասային պոլիկլինիկա:
Ո՞րն է նպատակը	Ստանալ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ:
Ո՞վ կարող է գրանցվել	<ul style="list-style-type: none">• Երևանում բնակվող ՀՀ քաղաքացիները,• ՀՀ հատուկ անձնագիր ունեցող օտարերկրյա քաղաքացիները,• ՌԴ և Սիրիայի քաղաքացիները, ովքեր ունեն կացության քարտեր:
Ի՞նչ արժե	Անվճար է:
Ինչպե՞ս գրանցվել «Վարդանանց»-ում	<ul style="list-style-type: none">• Զանգի միջոցով՝ զանգահարելով +374(60)59-21-00 հեռ.,• «Վարդանանց» այցելության միջոցով՝ մոտենալով Վարդանանց 18/1 հասցեով• Առցանց եղանակով՝ այցելելով Վարդանանց-ի կայք հետևյալ հղմամբ՝ https://vcim.am/attachment/, լրացնել դիմումը և ներբեռնել ձևաթուղթը: <p>Մինչև 18 տարեկան երեխաների դեպքում, ծնողը նախորդ պոլիկլինիկայից «Վարդանանց» է տեղաափոխում երեխայի բժշկական քարտը:</p>

Ինչու՞ գրանցել «Վարդանանց»-ում

«Վարդանանց» նորարարական
բժշկության կենտրոնը ապահովում է

- Համաշխարհային լավագույն
պրակտիկաների վրա հիմնված
ընթացակարգերով բժշկական
սպասարկում
- ISO 9001 որակի վերահսկման
ստանդարտի սերտիֆիկացում
- Early one հերթերի կառավարման
համակարգ
- Արդիական սարքավորումներ, որոնք
թարմացվում են ամեն 5 տարին մեկ
- Շվեյցարական և ֆրանսիական
արտադրողների կողմից ներկրված
նյութեր

Հնարավոր է 1 այցով ՊՊ
շրջանակներում մատուցվող
ծառայություններին զուգահեռ նաև ստանալ
ցանկացած վճարովի ծառայություններ

Ի՞նչ ծառայություններ են ներառված ծրագրում

(ցանկը համամապատասխանում է
ՀՀ կառավարության 2013 թ
դեկտեմբերի 26-ի N 1515-Ն
որոշմանը և ենթակա է փոփոխ-
ման որոշման փոփոխմանը համա-
ձայն, տարածայնությունների
դեպքում նախապատվությունը
տրվում է օրենքին)

1. Խորհրդատվություններ՝

- 1) Թերապևտ
- 2) Մանկաբույժ
- 3) Սրտաբան
- 4) Գինեկոլոգ
- 5) Ակնաբույժ
- 6) ԲԿԱ
- 7) Նյարդաբան
- 8) Մաշկաբան
- 9) Վիրաբույժ
- 10) Օնկոլոգ
- 11) Վարակաբան
- 12) Ներզատաբան

3-12 կետերով սահմանված
մասնագետների խորհրդատվությունները
իրականացվում են Պետ. պատվերի
շրջանակներում թերապևտի ցուցմամբ,
բացառությամբ՝ դիսպանսեր հսկողության

ներքո գտնվող հիվանդների այցերը վարող բժշկի մոտ:

Տնային այցելություններ՝ բժշկական ցուցման դեպքում:

Անաշխատունակության թերթիկների, տեղեկանքների և դեպի այլ հիվանդանոցներ ուղեգրերի տրամադրում:

2. Գործիքային հետազոտություններ, (մասնագետի ցուցմամբ)

- 1) Սոնոգրաֆիա՝ վահանաձև գեղձ, որովայն, փոքր կոնք, կրծքագեղձ
- 2) Հղիության սոնոգրաֆիկ որոշում
- 3) Պտղի սոնոգրաֆիա
- 4) Ռենտգեն հետազոտություն
- 5) Էլեկտրաստագրություն (ԷՍԳ)
- 6) Ներակնային ճնշման որոշում

3. Լաբորատոր հետազոտություններ (մասնագետի ցուցմամբ)

- 1) Արյան ընդհանուր հետազոտություն
- 2) Բիլիռուբին ընդհանուր
- 3) Մեզի ընդհանուր հետազոտություն
- 4) C-ռեակտիվ սպիտակուց (կիսաքանակական)
- 5) Էրիթրոցիտների նստեցման արագության որոշում
- 6) Ռեմատոիդ գործոն (կիսաքանակական)
- 7) Կանացի քսուրի հետազոտություն
- 8) PAP քսուր
- 9) Կրեատինին
- 10) Տղամարդու քսուրի հետազոտություն
- 11) Արյան խումբ և ռեզուս գործոն
- 12) Գլյուկոզա
- 13) Ընդհանուր սպիտակուց
- 14) Միզանյութ

- 15) Ալբումին
- 16) Հակաստրեպտոլիզին-O
(կիսաքանակական)
- 17) Հեպատիտ Bs հակաձին
(սքրինինգ)
- 18) Հեպատիտ C ընդհանուր
հակամարմիններ (սքրինինգ)
- 19) Խոլեստերին
- 20) Ասպարտատ
ամինոտրանսֆերազա
- 21) Ալանին ամինոտրանսֆերազա
- 22) Ֆիբրինոգեն
- 23) Պրոթրոմբինային ժամանակ, %, U/L

4. Այլ ծառայություններ (մասնագետի ցուցմամբ) `

- 1) Հղիության վարում
- 2) Ակնահատակի դիտում
- 3) Տեսողության սրության որոշում և
ակնոցի նշանակում
- 4) Ծծմբային խցանի հեռացում
- 5) Քթային արյունահոսության դա-
դարեցում
- 6) Ներերակային, միջմկանային,
ենթամաշային ներարկում
- 7) Ներերակային կաթիլային ներար-
կում
- 8) Վիրակապություն
- 9) Պատվաստումների իրակա-
նացում՝ համաձայն ՀՀ ԱՆ
ազգային օրացույցի
- 10) Դեղերի տրամադրում՝ համաձայն
ՀՀ ԱՆ կողմից հաստատված
ցանկի

Ի՞նչ ծառայություններ են ներառված արտոնյալ պայմաններով

- Էխսորտագրություն
- Տրեդմիլ թեստ
- Գաստրոսկոպիա
- Կոլոնոսկոպիա
- Մագիստրալ անոթների դոպլեքս հետազոտություն՝ մեկ հատված
- Մագիստրալ անոթների դոպլեքս հետազոտություն՝ երկու հատված
- Մագիստրալ անոթների դոպլեքս հետազոտություն՝ երեք հատված
- Ակնակապիճների, ակնագնդերի և հետքուրբար տարածության ԿՏ հետազոտություն
- Հավելյալ խոռոչների ԿՏ հետազոտություն
- Վերին ծնոտի ԿՏ հետազոտություն
- Ստորին ծնոտի ԿՏ հետազոտություն
- Վերին և ստորին ծնոտի ԿՏ հետազոտություն
- Քունքոսկրերի ԿՏ հետազոտություն
- Գլխուղեղի ԿՏ հետազոտություն
- Գլխուղեղի և հարակից խոռոչների ԿՏ հետազոտություն
- Պարանոցի ԿՏ հետազոտություն
- Կրծքավանդակի ԿՏ հետազոտություն
- Որովայնի ԿՏ հետազոտություն
- Կոնքի ԿՏ հետազոտություն
- Ողնաշարի պարանոցային հատվածի ԿՏ հետազոտություն
- Ողնաշարի գոտկա-սրբանային հատվածի ԿՏ հետազոտություն
- Ողնաշարի կրծքային հատվածի ԿՏ հետազոտություն
- ԿՏ անգիոգրաֆիա
- Կոմբինացված ԿՏ հաստ աղիքի կոնտրաստային հոգնայով
- Կոմբինացված ԿՏ ուռոգրաֆիայով
- ԿՏ հետազոտություն 1 հատված

- Կրկնակի ԿՏ հետազոտություն 1 հատված
- ԿՏ հետազոտություն 2 հատված
- Կրկնակի ԿՏ հետազոտություն 2 հատված
- ԿՏ հետազոտություն 3 և ավել հատվածներ
- Կրկնակի ԿՏ հետազոտություն 3 և ավել հատվածներ
- ԿՏ հետազոտություն հավելյալ սկավառակի տրամադրում
- ԿՏ հետազոտություն հավելյալ ժապավենի և սկավառակի տրամադրում
- Անզգայացում ԿՏ հետազոտության ժամանակ
- Ուղիղ աղիքային կոնտրաստավորում (առանց կոնտրաստ նյութի)
- Կոնտրաստավորում (առանց կոնտրաստ նյութի)
- Մեկ հատվածի հետազոտություն՝ բոլորսային կոնտրաստավորմամբ
- Երկու հատվածի հետազոտություն՝ բոլորսային կոնտրաստավորմամբ
- Երեք և ավել հատվածի հետազոտություն՝ բոլորսային կոնտրաստավորմամբ
- Գլիկոլիզացված հեմոգլոբին (Hb-A1C)
- Ալֆա-ֆետոպրոտեին (AFP)
- Պրոստատ սպեցիֆիկ հակաձին ընդհանուր (T-PSA)
- Ընդհանուր և ազատ պրոստատ սպեցիֆիկ հակաձին (T-PSA, F-PSA)
- Ուռուցքային հակաձին (CA 15-3)
- Ուռուցքային հակաձին (CA 19-9)
- Ուռուցքային հակաձին (CA 125)
- Չվարանների Էպիթելիալ ուռուցքային մարկեր (HE4)
- Կարցինոէմբրիոնալ հակաձին (CEA)

- Բետտա-2 միկրոգլոբուլին (β -2 microglobulin)
- Ֆերիտին (Ferritin)
- Իմունոգլոբուլին A (IgA)
- Իմունոգլոբուլին M (IgM)
- Իմունոգլոբուլին G (IgG)
- Իմունոգլոբուլին E (IgE)
- Հականուկլեար հակամարմիններ (ANA)
- C3 գործոն (C3 Factor)
- C4 գործոն (C4 Factor)
- Թիրոքսին (T4)
- Ազատ թիրոքսին (FT4)
- Տրիյոդթիրոնին (T3)
- Ազատ տրիյոդթիրոնին (FT3)
- Թիրեոտրոպ հորմոն (TSH)
- Թիրեոպերօքսիդազի հակամարմիններ (Anti-TPO)
- Թիրեոգլոբուլինի հակամարմիններ (Anti-TG)
- Թիրեոգլոբուլին (TG)

Ո՛վ կարող է օգտվել արտոնյալ պայմաններով տրամադրվող ծառայություններից

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն ել սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբեր

• Աղքատության (ընտանեկան) նպաստի համակարգում ընդգրկված 38,00 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուներ

- 1-ին խմբի հաշմանդամներ
- 2-րդ խմբի հաշմանդամներ
- 3-րդ խմբի հաշմանդամներ
- Հաշմանդամ երեխաներ (մինչև 18 տարեկան)

• Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք

- Միաձնող երեխաներ (մինչև 18 տարեկան)
- Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ (մինչև 18 տարեկան) և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք (18-23 տարեկան)
- Բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաներ
 - Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ
 - Չեռնոբիլի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ
 - Բռնադատվածներ
 - Բժշկասոցիալական փորձաքննության իրավասու պետական մարմնի ուղեգրով լրացուցիչ բժշկական հետազոտության ենթարկվողներ
 - Հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաներ (մինչև 18 տարեկան) մինչև 7 տարեկան երեխաներ
 - Նախագորակոչային և զորակոչային տարիքի անձինք (հիվանդանոցային և ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնություն, իսկ զորակոչային տարիքի անձանց՝ նաև հիվանդանոցային փորձաքննություն)
 - Չինծառայողներ և նրանց ընտանիքների անդամներ
 - Ձերբակալվածներ և ազատազրկման դատապարտվածներ
 - Մանկատներում և ծերանոցներում խնամվողներ
 - Մինչև 18 տարեկան՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաներ

ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Պարտադի՞ր պայման է ապահովագրություն ունենալ, որպեսզի դիմեմ Վարդանանց նորարարական բժշկության կենտրոն:

Ոչ: Մենք ընդունում ենք ֆինանսավորման տարբեր աղբյուրներ ունեցող մարդկանց՝ առողջության ապահովագրություն, պետպատվեր, տարբեր բարեգործական ծրագրերի անդամների և մարդկանց, որոնք իրենք են հոգում իրենց ծախսերը:

Հնարավո՞ր է արդյոք լաբորատոր հետազոտության արդյունքները ստանալ նույն օրը:

Այո: Լաբորատոր հետազոտության արդյունքները մենք տրամադրում ենք նույն օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ նմուշառումը կատարվել է աշխատանքային օրերին ժամը 18:00-ից, իսկ շաբաթ օրերին՝ 16.00-ից հետո և եթե կա որակի կրկնակի հսկողության կամ երկրորդ մասնագետի կարծիքի անհրաժեշտություն:

Որքա՞ն պետք է սպասեմ բժշկին այցելելու համար:

Մեր կենտրոնում գործում է հերթերի կառավարման ճկուն համակարգ, որը նվազագույնի է հասցնում սպասելու ժամանակը: Պլանային այցելության դեպքում սպասելը չի գերազանցում հինգ րոպեն: Ոչ պլանային այցելության դեպքում այն կարող է հասնել մինչև 15 րոպեի: Երկու դեպքում էլ Դուք կլինեք մեր անձնակազմի ուշադրության կենտրոնում, ձեր տրամադրության տակ կլինեն հարմարավետ սպասասրահները և զովացուցիչ ըմպելիքները:

Ուշադրություն: Բոլոր անհետաձգելի դեպքերը (սրտի նոպա, շնչառության անբավարարություն, գլխուղեղի կաթվածի (ինսուլտ) կասկած, ուժեղ ցավերի սինդրոմ և այլն) համարվում են արտահերթ և սպասարկվում են անմիջապես՝ ըստ առանձին կանոնակարգի:

Դուք ունե՞ք տնային այցերի ծառայություն, և եթե այո, ապա, ո՞ր դեպքերում կարող ենք օգտվել այդ ծառայությունից:

Այո, մեր կենտրոնում գործում է տնային այցելության ծառայություն:

Այն մատուցվում է հետևյալ դեպքերում՝
– Երբ հիվանդը ինքնուրույն ի վիճակի չէ այցելել կենտրոն (օրինակ՝ ջրազրկման, ցավի, մկանային թուլության և այլ դեպքերում)
– Մինչև 5 տարեկան երեխաներին այցն իրականացնելու վերջնական որոշումը կայացնում է բժիշկը, ով գնահատում է հիվանդի անհատական բողոքները, անամնեզը, ռիսկի գործոնները և տնային պայմաններում զննման առավելությունները:

Կարո՞ղ ենք կցագրվել ամբողջ ընտանիքով:

Այո, կարող եք կցագրվել ամբողջ ընտանիքով, սկսած 1 տարեկանից:

Քա՞նի օրվա ընթացքում է կատարվում կցագրումը:

Կցագրման ձևաթուղթը լրացնելու համար հարկավոր է 5-10 րոպե, և 7-10 աշխատանքային օրվա ընթացքում Դուք կդառնաք մեր պոլիկլինիկայի անդամ:

Կցագրման համար պարտադի՞ր է մոտենալ «Վարդանանց»:

Ոչ, պարտադիր չէ մոտենալ մոտենալ ԲԿ, կարող եք զանգահարել +374 (60) 59-21-00 հեռախոսահամարով, կամ լրացնել ձևաթուղթը առցանց եղանակով, այցելելով vcim.am կայք:

Եթե գրանցվեմ «Վարդանանց»-ում, որպես տեղամասային պոլիկլինիկա, նշանակում է, որ իմ պոլիկլինիկայից դուրս ե՞մ գալիս:

Այո, Ձեր տեղամասային պոլիկլինիկայից տեղափոխվում եք «Վարդանանց»-ի պոլիկլինիկա: